

Բազմակուսակցական համակարգի ձևավորման ու կայացման խնդիրը Հարավային Կովկասի չճանաչված պետություններում

ՄԱՐԳԱՐԻՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Երևանի Վ. Բրյուսովի անվան լեզվահասարակագիտական համալսարան

Հողվածում քննարկվում են բազմակուսակցական համակարգի ձևավորման ու կայացման խնդիրները չճանաչված պետություններում՝ Արցախի, Հարավային Օսիայի և Աբխազիայի օրինակներով: Բազմակուսակցական համակարգի ստեղծումը բարդ է հետխորհրդային տրանսֆորմացիայի ամբողջ տարածքում, այն առանձնահատուկ նշանակություն ունի պետության կայացման և քաղաքական համակարգի ձևավորման տեսանկյունից: Չճանաչված պետություններում հետխորհրդային տրանսֆորմացիայով պայմանավորված խնդիրներին ավելանում են լրացուցիչ բարդություններ, որոնք պայմանավորված են նախ ճանաչված չլինելու փաստով, ապա նաև հակամարտությունների կարգավորման բարդ ու երկարատև գործընթացով, աշխարհաքաղաքական գործոնի ազդեցությամբ, տնտեսական ու քաղաքական կայունության բացակայությամբ և այլն: Չճանաչված պետություններում, որպես կանոն, կուսակցական համակարգերը բնորոշվում են մրցակցության ցածր մակարդակով, սակայն բազմակուսակցական համակարգի ստեղծման ու ինստիտուցիոնալացման գործընթացները նպաստում են հետկոնֆլիկտային փուլի խնդիրների լուծմանն ու ժողովրդավարական ավանդույթների ներդրմանը և, ընդհանրապես, պետության կայացմանը:

Բանալի բառեր

Կուսակցություն, բազմակուսակցական համակարգ, հետխորհրդային տրանսֆորմացիա, հակամարտություն, չճանաչված պետություն, Հարավային Կովկաս:

Նախաբան

Բազմակուսակցական համակարգի ձևավորումն ու կայացումը բարդ ու բազմավեկտոր գործընթաց է հետխորհրդային տրանսֆորմացիայի ամբողջ տարածքում: Այն առանցքային նշանակություն ունի քաղաքական կայուն համակարգի ձևավորման ու պետության

կայացման տեսանկյունից, քանզի միայն ժողովրդավարական սկզբունքների ներառումը հասարակական կյանքի բոլոր ոլորտներում կարող է երաշխավորել հստակ ձևավորված քաղաքական համակարգի ու քաղաքացիական հասարակության ինստիտուտների կայուն ու փոխլրացնող աշխատանքը: Առհասարակ, կուսակցությունների գոյությունն ու փոխկապակցված աշխատանքն իր արտացոլումն է գտնում պետական իշխանության իրականացման գրեթե բոլոր բնագավառներում՝ հատկապես որոշումների կայացման գործընթացում: Մասնավորապես, հասկանալու համար, թե, օրինակ, կառավարության ձևավորման ընթացում կուսակցություններն ինչ գործունեություն կարող են ծավալել, անհրաժեշտ է հստակեցնել փոփոխականների երեք հիմնական ուղղություններ, նախ՝ կապը օրենսդիր մարմնի և կառավարության ձևավորման միջև, երե, իհարկե, այն առկա է, կուսակցություն ներկայացնող անհատների պատասխանատվությունը կառավարություն ձևավորելու կամ կառավարության մաս կազմելու որոշման համար և, ի վերջո, կառավարության ձևավորման գործընթացում ներգրավված անձանց ընտրությունը (կուսակցությունների ներկայացուցիչներ)¹:

Օբյեկտիվորեն հիմնավորելով կուսակցությունների գոյության անհրաժեշտությունը՝ Մ. Դյուբոյեթեն նշում է, որ դրանք ժամանակակից ժողովրդավարության հիմնական բաղկացուցիչներն են, հետևաբար առանց կայացած կուսակցությունների վարչակարգը չի կարող լինել ժողովրդավարական²:

Բազմակուսակցական համակարգի ձևավորման գործընթացը՝ կուսակցությունների շարունակական մրցակցության պայմաններում, գտնվում է հակադիր շահերի բախման կիզակետում և, միաժամանակ, կոչված է լուծելու հասարակական իդեալի և տվյալ պայմաններում հնարավոր առավելագույն արդյունք ապահովող քաղաքական կուրսի միջև հավասարակշռության ապահովումը: Ավելին, լինելով հասարակության մեջ պետական կառավարման համակարգ ձևավորող ամենաազդեցիկ ինստիտուտը՝ բազմակուսակցական համակարգն

¹ **Ware A.**, Political Parties and Party Systems, Oxford University Press, 1996, p. 12.

² **Дюверже М.**, Политические партии, Академический Проект, Москва, 2000.

իրենից ներկայացնում է մակրոհամակարգ, որը նպաստում կամ ակտիվ դերակատարություն է ունենում տարբեր այլ համակարգերի ձևավորման գործում³: Հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրներում ստեղծված նոր քաղաքական համակարգերի ուսումնասիրությունը թույլ է տալիս բացահայտել ինչպես ընդհանուր, այնպես էլ յուրաքանչյուր երկրում ստեղծված համակարգի յուրահատկություններն ու խորհրդային ժառանգության ազդեցությունը:

Ուսումնասիրելով կուսակցությունների գործունեությունն ու բազմակուսակցական համակարգերի ստեղծման առանձնահատկությունները հետխորհրդային տարածքում և, մասնավորապես, հետխորհրդային տարածքի չճանաչված պետություններում՝ հողվածում կներկայացվի Հարավային Կովկասի երեք չճանաչված պետություններում բազմակուսակցական համակարգերի ձևավորման ընթացքը, կայացման հնարավորություններն ու խոչընդոտները, ինչպես նաև անդրադարձ կկատարվի բազմակուսակցական համակարգի ստեղծման ազդեցությանը պետության կայացման ու քաղաքական համակարգի, ինստիտուտների ձևավորման, հետկոնֆլիկտային փուլի դժվարությունների հաղթահարման վրա: Խնդրո առարկայի տեսակետից անհրաժեշտություն է առաջանում դիտարկել չճանաչված պետություններում անցկացված խորհրդարանական ընտրություններն անկախության հռչակումից ի վեր և դրանց ազդեցությանն այդ պետություններում ընթացող ժողովրդավարական գործընթացների վրա:

Բազմակուսակցական համակարգերի ստեղծման առանձնահատկությունները հետխորհրդային տարածքում

ԽՍՀՄ փլուզումից հետո անկախացած պետություններում սկիզբ առանց աննախադեպ գործընթացներից գլխավորը բազմակուսակցական համակարգերի ձևավորումն է, որի ընթացքում կուսակցու-

³**Թորոյան Ս.**, Ժողովրդավարական բազմակուսակցական համակարգի ձևավորման նախադրյալները և բարդությունները հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրներում, *Լրաբեր հասարակական գիտությունների*, 2005, 3, 12-31:

թյունների թիվը աճեց տարերայնորեն: Հետխորհրդային երկրների համար բնական է այնպիսի կուսակցությունների գոյությունը, որոնք ժառանգություն են մնացել խորհրդային ժամանակներից կամ կրկնում են խորհրդային անցումային ժամանակների կուսակցական-կազմակերպական համակարգը. ընդ որում, կուսակցությունները կարող են լինել մեծ և ազդեցիկ, ինչը բացատրվում է այն կարևորությամբ, որ նրանք ունեցել են որպես քաղաքական համակարգի դերակատարներ⁴: Որպես օրինակ կարելի է դիտարկել «իշխանության կուսակցություն» հասկացությունը, որն ի հայտ է եկել ռուսական քաղաքագիտական գրականության մեջ դեռևս 1993-1994 թվականներին: Այն արատավոր երևույթ է և, երբեմն այս տերմինով է նաև բնորոշվում ամբողջ ռուսական քաղաքական էլիտան՝ որպես մեկ ամբողջություն⁵: Այնուամենայնիվ, հետխորհրդային տարածքում ստեղծված բազմակուսակցական համակարգերը միշտ չէ, որ միանշանակ են ընկալվում հետազոտողների կողմից. օրինակ, Պոլունինան⁶ նշում է, որ հետխորհրդային տարածքում մենք գործ ունենք ոչ թե բազմակուսակցական համակարգերի, այլ կուսակցությունների համախմբի հետ:

Կայացած բազմակուսակցական համակարգն ինքնակարգավորվող համակարգ է, սակայն այն ինքնաբերաբար չի ձևավորվում: Առնվազն առաջին փուլում, առավել ևս կարճ ժամանակամիջոցում ձևավորելու համար, անհրաժեշտ է այն ուղղորդել ժողովրդավարական ուղիով: Միաժամանակ, արհեստական քայլերն՝ ուղղված կուսակցությունների թվի ստիպողաբար կրճատմանն ու, մասնավորապես, երկկուսակցա-

⁴Պողոսյան Լ., Բազմակուսակցական համակարգի ինստիտուցիոնալացման գնահատման չափանիշներն ու դրանց օպտիմալացման խնդիրները հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրներում, *Հայկական քաղաքագիտական հանդես*, 2014, 1, 34-55:

⁵Голосов Г., Лихтенштейн А., “Партии власти” и российский институциональный дизайн: теоретический анализ., *Полис*, 2001, 1, 5-20.

⁶ Партии и партийные ситемы в современной России и послевоенной Германии, Москва, Ростовн/Д., 2004.

կան համակարգի ձևավորմանը, դատապարտված են ձախողման⁷: Յուրաքանչյուր երկրում քաղաքական համակարգը բնորոշվում է՝

- կուսակցությունների թվով և դրանց ստեղծման առանձնահատկություններով,
- կուսակցությունների միջև գաղափարական տարբերությամբ, ընտրական համակարգով և քաղաքական պայքարի իրավական հիմքերով,
- կուսակցությունների գործունեության խորհրդարանական առանձնահատկություններով⁸:

Առաջին կառուցվածքային նախապայմանն առկա է հետխորհրդային տարածքի գրեթե բոլոր երկրներում, քանզի ԽՍՀՄ փլուզումից հետո ստեղծվեցին բազմաթիվ կուսակցություններ: Առանցքային խնդիրներն առնչվում էին երկրորդ կառուցվածքային նախապայմանի հետ: Ստեղծված կուսակցությունների ծրագրերը մեծամասամբ կրկնում էին իրար կամ հիշեցնում կոմունիստական գաղափարախոսությունը: Առավել լուրջ խնդիրներն, իհարկե, ի հայտ եկան ընտրական գործընթացներում նորանկախ պետություններում և՛ նախագահական, և՛ խորհրդարանական ընտրությունների կազմակերպման գործընթացում, ինչի հիմնական պատճառը, թերևս, ընտրական գործընթացների կազմակերպման ու անցկացման փորձի ու գիտելիքների բացակայությունն էր:

Ըստ Գոլոսովի, բազմակուսակցական համակարգը ևս ունի իր թերությունները՝ այն ավելի է ընդգծում գաղափարախոսական տարբերությունները, մինչդեռ միակուսակցական համակարգը հեշտացնում է ընտրությունների անցկացումը: Ավելին, բազմակուսակցական համակարգի դեպքում տեղեկատվության մեծ հոսքերը, ինչպես նաև թեկնածուների մեծ թիվը, բարդացնում է խելամիտ ընտրությունը: Եվ, ի վերջո, բազմակուսակցական քաղաքական ղեկավարությունը սովորաբար կրում է կոալիցիոն բնույթ, ինչը մեծացնում է այդ

7Թորոսյան Տ., Ժողովրդավարական բազմակուսակցական համակարգի ձևավորման նախադրյալները և բարդությունները հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրներում, *Լրաբեր հասարակական գիտությունների*, 2005, 3, 12-31:

⁸**Дюверже М.**, Политические партии. Академический Проект, Москва, 2000.

համակարգի սպառնալիքի-շանտաժի ներուժը⁹: Հետխորհրդային տրանսֆորմացիայի բոլոր երկրներն էլ ընտրեցին բազմակարծության ու բազմակուսակցական համակարգ ստեղծելու ուղին, քանզի, ըստ նախնական պատկերացումների, երկկուսակցական համակարգը չէր ապահովելու սոցիալական բոլոր խմբերի ներգրավածությունը քաղաքական գործընթացներում (այդ թվում բոլոր խմբերի ներգրավածությունը կառավարման համակարգում):

Հետխորհրդային տրանսֆորմացիայի գործընթացում գտնվող երկրները, որոնք ժողովրդավարական համակարգի հաստատումը համարեցին վերջնանպատակ, բախվեցին մի շարք խնդիրների հետ (դրանց լուծումը միայն թույլ կտա հասնել վերջնական արդյունքի՝)

1. Ազգային միասնության ապահովում և ազգային ինքնության ձեռքբերում կամ վերախմբավորում:
2. Տնտեսական զարգացման բավականին բարձր մակարդակի ապահովում:
3. Այնպիսի մշակութային նորմերի և արժեքների զանգվածային տարածում, որոնք ենթադրում են ժողովրդավարական սկզբունքների և նորմերի ընդունում, հիմնական քաղաքական ինստիտուտների հանդեպ վստահություն, ինչպես նաև համախմբվածության ու քաղաքացիական գիտակցության բարձր մակարդակ:¹⁰

Սոցիալ-տնտեսական զարգացածության և ժողովրդավարության միջև կապը թեև առկա է, այնուամենայնիվ, արդեն իսկ հերքվել է ժողովրդավարացման կառուցվածքային մոտեցման կողմնակիցների այն տեսակետը, որ, որքան բարձր է ժողովրդի բարեկեցության մակարդակը, այնքան ավելի հավանական է, որ այն կլինի ժողովրդավարական: Կասկածները վերաբերում են ինչպես տեսական պլանին, այնպես էլ փաստերին¹¹: Հետևաբար անհրաժեշտ է հասարակության մեջ այնպիսի արժեքների ու մշակութային

⁹ **Golosov G.**, Towards a classification of the world's democratic party systems, step 1, Identifying the units, *Party Politics*, 2013, № 19, pp. 122-142.

¹⁰ **Мельвиль А.Ю.**, Демократические транзиты, транзитологические теории и посткоммунистическая Россия, 2000, сс. 337-368.

¹¹ **Lipset M.**, Some Social Requisites of Democracy: Economic Development and Political Legitimacy, *The American Political Science Review*, 1959, **53**, 1, 69-105.

նախապայմանների ստեղծումը՝ առաջին հերթին արժեքների և նորմերի միջոցով, որոնք կաստցացվեն «քաղաքացիական մշակույթի» (civic culture)¹², ինչպես նաև սոցիալական, կրոնական, մշակութային ավանդույթների հետ, քանզի ժողովրդավարության ձևավորումն ու կայացումն ավելի իրատեսական է միատարր հասարակություններում, քան մասնատված¹³: Այս տեսանկյունից առանձնահատուկ կարևոր նշանակություն ունի ժողովրդավարական ինստիտուտների ձևավորման գործընթացը, կայուն բազմակուսակցական համակարգի գոյությունն ու ժողովրդավարական ընտրությունների անցկացումը:

Բազմակուսակցական համակարգերի ստեղծման առանձնահատկությունները չճանաչված պետություններում

Չճանաչված պետություններում քաղաքական համակարգի և, հատկապես, բազմակուսակցական համակարգերի ձևավորման ու զարգացման գործընթացի ուսումնասիրությունը կարևոր է անցումային շրջանի բարդություններն ու մարտահրավերները հաղթահարելու տեսանկյունից, ինչպես նաև այն առումով, որ բազմակուսակցական համակարգի ստեղծման ու ինստիտուցիանալացման գործընթացը նպաստելու է ժողովրդավարական ավանդույթների ներդրման բարդ ու երկարատև փուլի հաղթահարմանը: Ուստի, չճանաչված պետություններում իրապես կարևորվում է կուսակցական համակարգերի ստեղծումն ու արդյունավետության մակարդակը նոր՝ բազմակուսակցական համակարգ ստեղծելու ճանապարհին, քանզի չճանաչված պետությունները ձգտում են տեղ գրավել այնպիսի համակարգում, որը չի ընդունում նրանց որպես այդ նույն համակարգի մաս կազմող անդամներ¹⁴: Վերջին շրջանում չճանաչված պետություններն ընտրել են այն ուղին, որն իրենք համարում են նորմատիվային փոփոխություն միջազգային ասպարեզում: Որպես

¹² **Almond G., Verba S.**, *The Civic Culture: Political Attitudes and Democracy in Five Nations*, 2015, p. 576.

¹³ **Dahl R.**, *Polyarchy, Participation and Opposition*, New Haven, Yale University Press, 1971.

¹⁴ **Caspersen, N.**, *States without sovereignty: imitating democratic statehood*. *Caspersen, N., Stansfield, G. (Eds.), Unrecognized States in the International System*. Routledge, London, 2011, p. 4.

օրինակ դիտարկվում է Կոստովոյի «վերահսկվող ժողովրդավարությունը» և առհասարակ այն, որ հիմնական շեշտը դրվում է ժողովրդավարացման գործընթացի վրա և եզրակացնում, որ ճանաչումն իրատեսական է, եթե չճանաչված պետություններում ստեղծվել են արդյունավետ ժողովրդավարական ինստիտուտներ¹⁵: Այս ամենն առանցքային նշանակություն կարող է ունենալ պետության կայացման ու միջազգային ճանաչման տեսանկյունից:

Կուսակցական համակարգի ինստիտուցիանալացումը, ինչպես Հանթինգտոնն է նշում, գործընթաց է, որի արդյունքը պետք է լինի կուսակցության ստեղծումն իրեն բնորոշ արժեքային հիմքով և կայունությամբ¹⁶, սակայն մեկ կուսակցության ինստիտուցիանալացումը դեռևս չի ենթադրում ողջ համակարգի ինստիտուցիանալացման գործընթացի իրականացում¹⁷: Ըստ այդմ, գործընթացի արդյունավետությունն ապահովելու տեսանկյունից կարևոր է փաստել, որ ուշադրությունը պետք է սևեռված լինի կուսակցությունների փոխհարաբերություններին՝ միմյանց հետ և հասարակության մնացած հատվածների հետ: Այն պետք է հիմնված լինի փոխզուգահեռների վրա, ինչն էլ ենթադրում է, որ յուրաքանչյուր կուսակցություն պետք է լինի կայուն ու գործի ըստ իր ռազմավարության, որպեսզի պատրաստ լինի համակարգործակցության, առավել ևս՝ մրցակցության: Այս նախապայմանն առավել ակներև է հենց չճանաչված պետություններում, որտեղ մրցակցությունը շատ հաճախ դիտարկվում է որպես խոչընդոտ ճանաչման ճանապարհին:

Հետխորհրդային տարածքի չճանաչված պետություններում հետխորհրդային տրանսֆորմացիայով պայմանավորված խնդիրներին ավելանում են նաև այն բարդությունները, որոնք պայմանավորված են նախ և առաջ միջազգային հանրության կողմից դե յուրե ճանաչված չլինելու փաստով: Այս պետությունները պետք է դիմակայեին նաև այնպիսի մարտահրավերների, որոնք հետկոնֆլիկտային փուլի

¹⁵ **Caspersen N.**, Separatism and Democracy in the Caucasus, *Survival*, 2008, **50**, 4, 113–136.

¹⁶ **Хантингтон С.**, Политический порядок в меняющихся обществах. Москва, Прогресс Традиция, 2004, с. 480.

¹⁷ **Randall V., Svasand L.**, Party institutionalization in new democracies, *Party Politics*, 2002, 1, 21-32.

արդյունքն էին: Առհասարակ, հետկոնֆլիկտային իրավիճակում կուսակցությունների ստեղծման ու բազմակուսակցական համակարգի ձևավորման խնդիրները շատ քիչ են ուսումնասիրվել, թերևս նաև այն պատճառով, որ դրանք դիտարկվել են որպես պետական կառույցների կամ կառավարությունների ստեղծման գործընթացի անքակտելի մաս¹⁸: Այսպիսով, խնդիրների շարքին, որոնց բխվում են չճանաչված պետությունները բազմակուսակցական համակարգի ստեղծման ճանապարհին, կարելի է դասել՝

- խնդիրներ, որոնք ընդհանուր են հետխորհրդային տարածքի ինչպես ճանաչված, այնպես էլ չճանաչված պետությունների համար (քաղաքական համակարգի տրանսֆորմացիա կամ նոր քաղաքական համակարգի ձևավորում, կուսակցությունների ինստիտուցիոնալացման գործընթաց, բազմակուսակցական համակարգի ձևավորում և այլն),
- միջազգային ճանաչման գործընթաց,
- հետկոնֆլիկտային փուլի մարտահրավերների հաղթահարում (տնտեսական խնդիրներ, ռազմական գործողությունների վերակսման վտանգ և այլն):

Քաղաքական համակարգի ձևավորման տեսանկյունից չճանաչված պետությունների առաջին և հիմնական մարտահրավերը կուսակցությունների մրցակցային համակարգի ստեղծումն է: Ժողովրդավարության ամրապնդումը, որը չճանաչված պետությունները հայտարարում են որպես գերակա խնդիր, կարևոր է կուսակցությունների միջև փոխհամաձայնեցման ու փոխվստահության մթնոլորտի ստեղծման տեսանկյունից: Հետևաբար, չճանաչված պետություններում քաղաքական համակարգի զարգացման ուսումնասիրությունն ու վերլուծությունը կարևոր է մի քանի հիմնական պատճառներով¹⁹՝

1. Կուսակցական համակարգը կարող է հանդիսանալ ցուցիչ, որը հնարավորություն կտա պարզել, թե արդյոք այդ

¹⁸ **Neandovic M.**, An uneasy symbiosis: the impact of international administrations on political parties in post-conflict countries, *Democratization*, 2010, 17, 6, 1153–1175.

¹⁹ **Ishiyama J., Batta A.**, The emergence of dominant political party systems in unrecognized states, *Communist and Post-Communist Studies*, 2012, 45, 123-130.

- պետություններին (չճանաչված) բնորոշ են իրական ժողովրդավարական հանտկանիշները, թե ոչ:
2. Ի՞նչպես են միջազգային դերակատարներն ու ազդակներն ազդում «ներքին» քաղաքական գործոնների վրա, ինչն էլ իր հերթին ազդում է կուսակցական համակարգերի զարգացման վրա:
 3. Ուղին, որով կուսակցությունները զարգանում են չճանաչված պետություններում, ցույց կտա, թե ի վերջո ինչ կարգավիճակ այն կստանա:

Հատկանշական է, որ չճանաչված պետություններում ճանաչումը դիտարկվում է որպես առաջնային նախապայման ու վերջնանպատակ, այն չճանաչված պետության հիմնական բնորոշ գիծն է և կենտրոնական դիրք է գրավում քաղաքական էլիտայի ծրագրերում²⁰, ինչպես նաև կարող է օգտագործվել ընտրությունների ժամանակ քարոզչական նպատակներով: Բացի այդ, դե ֆակտո պետությունների քաղաքական էլիտաները կարծում են, որ պետության կենսագործունեությունն ու ժողովրդավարեցման գործընթացում գրանցած արդյունքներն ու առաջընթացի «ցուցադրումը» կարող է դրական ազդեցություն ունենալ ճանաչման գործընթացում²¹: Եվ այս ամենն այն պարագայում, որ միջազգային իրավունքը չի սահմանում նոր պետությունների ստեղծման նախադրյալները, բացի մի փաստաթղթից՝ Մոնտեվիդեոյի հռչակագրից, որն ընդունվել է 1933թ.: Հռչակագրի առաջին հոդվածում, մասնավորապես, նշվում է. «Պետությունը որպես միջազգային իրավունքի սուբյեկտ պետք է ունենա հետևյալ հատկանիշները՝ մշտական բնակչություն, սահմանված տարածք, կառավարություն և այլ պետությունների հետ հարաբերություններ հաստատելու կարողություն»²²:

²⁰ **Caspersen, N.**, States without sovereignty: imitating democratic statehood. In: *Caspersen, N., Stansfield, G. (Eds.), Unrecognized States in the International System*. Routledge, London, 2011, pp. 73–89.

²¹ **Ishiyama J., Batta A.**, նույն տեղում:

²² Montevideo Convention on the Rights and Duties of States <https://treaties.un.org/pages/showDetails.aspx?objid=0800000280166aef>, (29.06.2017)

Յուրաքանչյուր երկրի համար բազմակուսակցական համակարգի ձևավորման համար ելակետը կարող է լինել տարբեր՝

- պետության ձևավորման առանձնահատկությունները,
- ազատ ընտրությունների անցկացումը,
- տվյալների կամ աղբյուրների առկայություն (ընտրական և հետընտրական գործընթացների վերլուծություն): Բոլոր պետություններում նախորդ ընտրությունների վերաբերյալ վերլուծությունը ավարտվում է հաջորդ ընտրություններից անմիջապես առաջ:²³

Չճանաչված պետությունների ձևավորման հիմնական առանձնահատկություններից մեկն էլ պետական համակարգի ձևավորումն է պատերազմական գործողություններին զուգընթաց, ստատուս-քվոյի պայմաններում կամ հետկոնֆլիկտային խնդիրների հաղթահարման փուլում, այդ թվում՝ քաղաքական մեկուսացում, տնտեսական անկայունություն և այլն: Կարևորագույն ցուցիչներից մեկն էլ հենց ազատ ընտրությունների անցկացումն է ժողովրդավարացման գործընթացի դժվարությունների հաղթահարման փուլում գտնվող պետություններում: Սակայն ընտրական և հետընտրական գործընթացների վերլուծության ու տվյալների հասանելիության խնդիր կա գրեթե բոլոր չճանաչված պետություններում (Աբխազիա, Հարավային Օսիա), այնինչ այդ վերլուծությունների առկայությունը կարող էր բացահատել որոշակի փուլում կատարած սխալներն ու կանխել հետագա բարդությունները ժողովրդավարացման ճանապարհին:

Հարավային Կովկասի չճանաչված պետություններում խորհրդարանական ընտրությունների անցկացման ազդեցությունը ճանաչման գործընթացի վրա

Հարավային Կովկասի չճանաչված պետություններում ինքնորոշմանը նախորդել է խտրականության ու բռնաճնշումների բարձր մակարդակը, որոնց արդյունքում մետրոպոլիան ձգտում էր

²³ **Caramani D.**, The End of Silent Elections: The Birth of Electoral Competition, 1832-1915, *Party Politics*, 2004, 9, 4, 411-443.

փոխել իրավիճակը, մասնավորապես, ժողովրդագրական պատկերը: Թեև դրա արդյունքում զգալիորեն նվազել է տիտղոսակիր ժողովրդի մասնաբաժինը բնակչության ընդհանուր թվի համեմատ, սակայն ներկայումս Արցախում և Հարավային Օսիայում մեծ է տիտղոսակիր բնակչության թիվը, մինչդեռ Աբխազիայում պատկերն այլ է: Այդուհանդերձ, այդ հանգամանքն ազդեցիկ գործոն չէ Աբխազիայում ժողովրդավարացման գործընթացի վրա ազդեցության տեսակետից²⁴: Առանցքային նշանակություն չունի նաև, թե ինչպիսին էր այդ պետությունների կարգավիճակը ԽՍՀՄ կազմում. Արցախը և Հարավային Օսիան ունեին ինքնավար մարզի կարգավիճակ, մինչդեռ Աբխազիան՝ ինքնավար հանրապետության²⁵: Հարավային Կովկասի երեք չճանաչված պետություններն էլ հայտարարում են, որ ապացուցել են իրենց կենսունակությունը որպես ժողովրդավարական պետություններ, և այդպիսով նաև վաստակել իրենց ինքնիշխանությունը²⁶: Սակայն անհարժեշտ է դրա իսկությունը պարզել ուսումնասիրությունների միջոցով:

Հարավային Կովկասի չճանաչված պետություններում բազմակուսակցական համակարգի ստեղծման գործընթացը, թեև ավելի փոքր ծավալներով, քան ճանաչված պետություններում, սկսվեց ԽՍՀՄ փլուզումից անմիջապես հետո: Առաջնային պլան մղվեց նոր քաղաքական համակարգի և ինստիտուտների ձևավորման հրամայականը: Առհասարակ, կուսակցությունների առաջացման գործընթացն այս տարածաշրջանի չճանաչված պետություններում ընթացել է գրեթե զուգահեռաբար. այդ գործընթացի վրա մեծ ազդեցություն է թողել պատմական և քաղաքական համատեքստը: Խոսքն, իհարկե, վերաբերում է նախորդող պատերազմական գործողություններին, որոնք ընթացել են գրեթե զուգահեռաբար: Այս պետություններում անկախության ճանաչման համար մղվող պայքարին զուգընթաց պետք էր հաղթահարել անցումային շրջանի

²⁴ **Kolsto P., Blakkisrud H.**, Living with Non-recognition: State- and Nation-building in South Caucasian Quasi-states, *Europe-Asia Studies*, 2008, **60**, 3, 483-509.

²⁵ Նույն տեղում:

²⁶ **Caspersen N.**, Separatism and Democracy in the Caucasus, *Survival*, 2008, **50**, 4, 113-136.

բարդություններն ու կարգավորել ն' ներքին, ն' արտաքին քաղաքականությանը վերաբերող խնդիրները: Քաղաքական ինստիտուտների ձևավորմանը գուզնթաց անհրաժեշտություն կար ապահովել նաև այդ կառույցների արդյունավետ ու փոխլրացնող աշխատանքը: Ընդ որում, եթե բազմակուսակցական համակարգի ձևավորման հիմնական մարտահրավերներից մեկը՝ խորհրդային ժառանգություն միակուսակցական համակարգի փորձն ու գիտելիքները, հատուկ էին նաև ճանաչված հետխորհրդային պետություններին, ապա մյուսը՝ զինվորականների մեծ ազդեցությունը հետպատերազմյան քաղաքական կյանքում հատուկ էր միայն չճանաչվածներին: Մինչդեռ չճանաչված պետություններում կուսակցությունների ինստիտուցիոնալացման գործընթացում ավելի է կարևորվում դրանց առարկայացումը հասարակական գիտակցության մեջ, որի արդյունքում կուսակցությունը սկսում է գոյություն ունենալ իր առաջնորդներից անկախ՝ շարունակաբար ցուցաբերելով «բովանդակալից վարքագիծ»²⁷:

Բազմակուսակցական համակարգի զարգացման ու կայացման տեսանկյունից առանցքային նշանակություն ունեն լիարժեք մրցակցային պայմաններում բազմակուսակցական ընտրությունների անցկացումը և կուսակցությունների միջև տեղերի բաշխումը, խորհրդարանական ընտրությունների անցկացումը անկախացումից ի վեր, ինչը կարևոր է նաև ժողովրդավարական ավանդույթների ներդրման տեսանկյունից, քանզի ընտրություններն անցկացվում են անմիջապես պատերազմական գործողությունների ավարտից հետո, երբ քաղաքական ինստիտուտները լիարժեք չեն ձևավորված և շատ մեծ է նոր բռնությունների վտանգը: Այս պարագայում միջազգային դերակատարների ջանքերը հետպատերազմյան ընտրությունների անցկացման գործընթացում կարող են ունենալ հետևյալ ելքերը. պատերազմական գործողությունների վերսկսկսում, նոր ցնցումներ ու լարվածության աճ, կամ պատերազմի վերսկսման վտանգի կանխարգելում խաղաղարար գործողությունների իրականացման և

²⁷ Janda K., Comparative Political Parties: Research and Theory, 1980.

քաղաքական ինստիտուտների ձևավորման միջոցով²⁸: Աֆղանստանում և Իրաքում ՄԱԿ-ի նախկին դեսպան Լախոյար Բրահիմին համարում է²⁹, որ ընտրությունները կարող են արդարացնել բոլոր ակնկալիքները միայն այն դեպքում, եթե միայն դրանք անցկացվում են ճիշտ ժամանակին և հակամարտության կարգավորման գործընթացին զուգահեռ:

Հետկոնֆլիկտային ընտրությունները կարող են շրջադարձային կետ լինել պետության կառուցման ու ճանաչման, ինչպես նաև հետկոնֆլիկտային բազմաթիվ խնդիրների կարգավորման տեսանկյունից: Որոշ դեպքերում հետկոնֆլիկտային փուլի առաջին ընտրություններն առաջին քայլն են դեպի խաղաղությունն ու ժողովրդավարության ամրապնդումը, սակայն ավելի հաճախ դրանք կարող են հանգեցնել պատերազմական գործողությունների վերսկսման կամ ավտորիտարիզմի հաստատման³⁰:

Հետկոնֆլիկտային շրջանում անցկացված ընտրությունները, թերևս, կարևոր է դիտարկել երկու հիմնական պատճառով. նախ, դրանք կարող են ցուցիչ հանդիսանալ չճանաչված պետության հասարակական կյանքի կարգավորման ու կազմակերպման սկզբունքի ընտրության հարցում (ժողովրդավարություն, թե ավտորիտարիզմ), երկրորդ, դրանք կարող են ցույց տալ, թե որքանով է ընտրությունների արդյունքում ձևավորված իշխանությունները պատրաստ դիմակայել հետկոնֆլիկտային փուլի խնդիրների հաղթահարմանը: Միայն ժողովրդավարական սկզբունքների հիման վրա կազմակերպված և իրականացված ընտրությունները կարող են երաշխավորել պետական ինստիտուտների կայուն աշխատանքը:

Միաժամանակ, չճանաչված պետություններում հետկոնֆլիկտային ժողովրդավարական ընտրությունները կարող են նպաստել պետության միջազգային ճանաչման բարդ ու երկարատև գործընթացի

²⁸ **Brancati D. Snyder J.**, Rushing to the Polls: The Causes of Premature Postconflict Elections, *Journal of Conflict Resolution*, 2011, 55(3), 469-492.

²⁹ **Brahimi L.**, State Building in Crisis and Post-conflict Countries, Seventh Global Forum on Reinventing Government, June 2007, <http://unpan1.un.org/intradoc/groups/public/documents/UN/UNPAN026305.pdf>, (18.07.2017)

³⁰ **Brancati D. Snyder J.**, նույն տեղում.

հաղթահարմանը՝ չնայած այն հանգամանքին, որ այստեղ դիտորդական առաքելությունները բացակայում են և, սովորաբար, միջազգային կազմակերպություններն ընտրություններից հետո հանդես են գալիս հայտարարությամբ, որ չեն ընդունում ընտրությունների արդյունքները: Դիտորդական առաքելությունները հիմնականում իրականացվում են ոչ թե պաշտոնական պատվիրակությունների ձևաչափով, այլ անհատների նախաձեռնությամբ:

Միջազգային կազմակերպությունները չեն ճանաչում ընտրությունների արդյունքները՝ մատնանշելով այդ պետությունների ճանաչված չլինելը, սակայն իրականում դա առնչություն չունի պետության միջազգային ճանաչման հետ: Այդ կազմակերպությունների այս կամ այն արձագանքը մեծապես պայմանավորված է հենց հակամարտության կարգավորման գործընթացում ներգրավված լինելու կամ տարածաշրջանում աշխարհաքաղաքական շահեր ունենալու հանգամանքով: Ի վերջո, ճիշտ կազմակերպված և իրականացված ընտրությունները սերտ առնչություն ունեն ժողովրդավարական գործընթացների հետ: Ընտրությունների անցկացման նպատակն, առաջին հերթին, տվյալ երկրի ներքին կյանքի կազմակերպումն է, իսկ ընտրությունները հայտնվում են միջազգային հանրության ուշադրության կենտրոնում երկու դեպքում միայն. նախ, եթե այդ պետությունը մեծ ազդեցություն ունի միջազգային հարաբերությունների վրա կամ էլ ընտրությունների անցկացման ժամանակ տեղի են ունենում անկանխատեսելի շրջադարձեր³¹:

Ոչ մի պետություն կամ միջազգային կազմակերպություն այլ երկրում անցկացված ընտրությունները ճանաչելու կամ չճանաչելու իրավասություններ չունի (ինչ վերաբերում է, օրինակ, Եվրոպայի Խորհրդի հնչեցված գնահատականներին, ապա դրանք վերաբերում են միայն այդ միջազգային կառույցին անդամակցող երկրներին, և այն էլ, ոչ թե բուն ընտրություններն, այլ ժողովրդավարացման գործընթացում այդ երկրի ստանձնած պարտավորություններին)³²: Այս տեսանկյունից միանգամայն անհիմն են տարբեր պետությունների կարծիքներն ու

³¹ **Торосян Т.**, Ильхам Алиев проиграл президентские выборы в Карабахе, <https://regnum.ru/news/polit/1559948.html>, (08.09.2017)

³² Նույն տեղում:

զնահատականները ընտրությունների ճանաչման գործընթացի հետ կապված: Չճանաչված պետություններում անցկացվող ընտրությունների նկատմամբ միջազգային կազմակերպությունների վերաբերմունքի այդ կաղապարների հաղթահարումը կարևոր է, քանզի ժողովրդավարացման գործընթացներն, այդ թվում և ընտրական, կարող են խթան հանդիսանալ հակամարտության կարգավորման գործընթացում:

Միջազգային հանրությանն ինտեգրման և ընտրությունների արդյունքների չմերժման տեսանկյունից անհրաժեշտ է նաև անդրադառնալ առանցքային նշանակություն ունեցող հետևյալ խնդրին. ընտրությունների անցկացման և պետության ճանաչվածության կապը հանգեցնում է կուսակցությունների մեկուսացմանը ինչպես տարածաշրջանային, այնպես էլ միջազգային քաղաքական գործընթացներից: Դրական միտում, թերևս, նկատվում է միայն վերջին շրջանում: Դեռևս 2015թ. ապրիլին Արցախի ժողովրդավարական կուսակցության Կենտրոնական խորհրդի անդամ Աշոտ Ղուլյանը՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետություն այցի շրջանակներում մասնակցել է Եվրոպական ազատ դաշինք (ԵԱԴ) կուսակցության 13-րդ տարեկան համագումարի աշխատանքներին: Համագումարի շրջանակներում քվեարկության արդյունքում Արցախի ժողովրդավարական կուսակցությունը դարձել է ԵԱԴ ասոցացված անդամ³³:

Անցանկալի է նաև հակառակ գործընթացը, երբ վերջնական կարգավիճակի որոշումը պայմանավորվում է ժողովրդավարացման սահմանված մակարդակի ապահովմամբ: Այդ առումով հետաքրքրական է հատկապես Կոսովոյի դեպքի ուսումնասիրությունը: 2003թ. դեկտեմբերին հրապարակվեց «Չափորոշիչներ Կոսովոյի համար» վերնագրով փաստաթուղթը: «Չափորոշիչները» պետք է Կոսովոն նախապատրաստեին վերջնական կարգավիճակին: Դրանք վերաբերում էին ութ ոլորտների՝ ժողովրդավարական ինստիտուտների գործունեություն, օրենքի գերակայություն, տեղաշարժման ազատություն, վերադարձ և վերաինտեգրում, տնտեսություն, իրավունքների հարգում, երկխոսություն Բելգրադի հետ, Կոսովոյի

³³ Արցախի ժողովրդավարական կուսակցությունը՝ Եվրոպական ազատ դաշինքի ասոցացված անդամ, <http://www.dpa.am/wp/archives/2059?lang=hy> (03.09.2017)

պաշտպանության մարմիններ³⁴: Մակայն ինչպես զարգացումները ցույց տվեցին (նոր արյունալի բախումներ), հակամարտության կարգավորման գործընթացում առանցքային նշանակություն ունի հենց կարգավիճակի հստակեցումը:

Համաշխարհային միջազգային գործընթացներից չճանաչված պետությունների մեկուսացման պրակտիկան ստեղծում է ոչ միայն սոցիալական անարդարություն՝ տնտեսապես, սոցիալապես և քաղաքականապես մեկուսացնելով տարածքի բնակչությանը, այլև կառավարման, այսպես կոչված, «սպիտակ բծեր»³⁵, ինչպես նաև խոչընդոտում է պետության կայացման տեսակետից բացառիկ նշանակություն ունեցող բազմակուսակցական համակարգերի կայացման համար անհրաժեշտ գիտելիքների ու փորձի ձեռքբերման հնարավորությունից:

Ինտեգրման ու համագործակցության տեսանկյունից չճանաչված պետություններում ժողովրդավարացման գործընթացի վրա ուղիղ և վճռորոշ ազդեցություն կարող է ունենալ այդ պետությունների կրթական համակարգերի զարգացումը, մասնավորապես, Բոլոնիայի գործընթացում նեգրավվելը: Բարձրագույն կրթության ոլորտում առաջնային նշանակություն ունի հասարակության բոլոր խմբերի համար հավասար հնարավորությունների, հասանելիության և ներկայացվածության ապահովումն ուսումնական ծրագրերում: Բոլոնիայի գործընթացի արդյունքում ձևավորված Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի մաս չկազմող, այդ թվում՝ չճանաչված երկրները, կարող են և պետք է մոդելավորեն իրենց բարձրագույն կրթության համակարգերը Բոլոնիայի գործընթացի հիման վրա՝ ներառելով դրա հիմքում ընկած արժեքները կրթական բարեփոխումների ծրագրերում, ինչը գործընթացի ընձեռնած

³⁴ **Թորոսյան Ս.**, Լեռնային Ղարաբաղի և Կոստովոյի հակամարտությունների ընդհանրություններն ու առանձնահատկությունները, *Լրաբեր հասարակական գիտությունների*, 2007, 2, 3-16:

³⁵ **Թորոսյան Ս.**, Հասարակական գիտությունների և այդ ոլորտում բարձրագույն կրթության հիմնախնդիրների առանձնահատկություններն ու լուծման հնարավորությունները հետխորհրդային երկրներում, *Հայկական քաղաքագիտական հանդես*, 2014, 1(1), 5-18:

հնարավորությունների օգտագործման հիմքեր կստեղծի³⁶, քանզի կրթության իրավունքը մարդու հիմնարար իրավունքներից մեկն է և ամրագրված է ինչպես «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում»³⁷, այնպես էլ «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրում»³⁸: Ընդ որում, վերոնշյալը պետք է գործի անկախ այն հանգամանքից՝ պետությունը ճանաչված է, թե ոչ: Մինչդեռ, խտրական վերաբերմունք կա չճանաչված պետությունների նկատմամբ: Մասնավորապես, Կոստովոյին ներգրավելով այդ գործընթացում, մյուս չճանաչված պետություններին նման հնարավորություն չի տրվում: Տեղի բնակչությանը բարձրագույն կրթության ոլորտի արդիականացման գործընթացից դուրս թողնելը նշանակում է հակամարտությունների հետագա կարգավորումը դարձնել զգալիորեն ավելի բարդ՝ չնայած այն փաստին, որ ուսումնասիրություններում հաճախ կրթությունը դիտվում է որպես հաշտեցման գործիք³⁹: Բոլոնիայի գործընթացին անդամակցելը չի նշանակում միայն բարձրագույն կրթական համակարգի ներմուծում՝ հիմնված բարձրագույն և հետբուհական ծրագրերի, թափանցիկ կրեդիտային համակարգի ձևավորման, որակի և համադրելիության ապահովման, ինչպես նաև ուսանողների ու անձնակազմի շարժունակության խթանման վրա: Դա նաև ենթադրում է Բոլոնիայի գործընթացի հիմքում ընկած եվրոպական արժեքների որդեգրում և դրանց զարգացում: Ի վերջո, արտաքին խնդիրների լուծումն անհնար է առանց ներքին խնդիրների լուծման⁴⁰:

³⁶ **Շույց Ռ.**, Բարձրագույն կրթություն առանց խտրականության. Բոլոնիայի գործընթացը և եվրոպական արժեքները, *Հայկական քաղաքագիտական հանդես*, 2015, N 1(2), էջ 115-133

³⁷ Universal Declaration of Human Rights, Universal Declaration of Human Rights, <http://www.un.org/en/universal-declaration-human-rights/index.html> (07.09.2017)

³⁸ International Covenant on Economic, Social and Cultural Rights, <http://www.ohchr.org/EN/ProfessionalInterest/Pages/CESCR.aspx> , (07.09.2017)

³⁹ **Օհանյան Ա.**, Սառեցված հակամարտություններ, թե՞ սառեցված կառավարում. Բոլոնիայի գործընթացի դերը հակամարտությունների տարածաշրջաններում, *Հայկական քաղաքագիտական հանդես*, 2014, 2, 97-116:

⁴⁰ **Շույց Ռ.**, նույն տեղում

Հարավային Կովկասում բարձրագույն կրթության՝ հակամարտության նկատմամբ զգայուն և տարածաշրջանային մոդելների զարգացման ճանապարհով Բոլոնիայի գործընթացը կարող է մշակել մեխանիզմ, որն ուղղված կլինի բարձրագույն կրթության տարածաշրջանային ցանցային համակարգի զարգացմանը: Որպես այդպիսին, այն կարող է օգնել ստեղծել կառավարման տարածաշրջանային կառույցներ կրթության ոլորտում, քանզի բարձրագույն կրթությունը չճանաչված պետություններում խաղաղ գոյակցության ու զարգացման համար հուսալի գործիք կարող է հանդիսանալ⁴¹:

Հակամարտության կարգավորման գործընթացի հետ անմիջական և ուղիղ կապի պատճառով ահռելի նշանակություն ունեն հետկոնֆլիկտային ընտրությունները, ընդ որում, այս առումով առանցքային դերակատարություն կարող է ունենալ նաև երկրում ձևավորված բազմակուսակցական համակարգը՝ որպես չճանաչված պետության ժողովրդավարեցման գործընթացի հաջող արդյունք:

Արցախի դեպքը

Արցախում բազմակուսակցական համակարգի ստեղծման գործընթացը սկսվեց Խորհրդային Միության փլուզումից կարճ ժամանակ անց, երբ 1991թ. դեկտեմբերի 10-ին անցկացվեց ԼՂ անկախության հանրաքվեն, որն իրականացվեց «ԼՂՀ հանրաքվեի անցկացման մասին ժամանակավոր կանոնակարգի» համաձայն⁴²:

Արցախում առաջին խորհրդարանական (Գերագույն խորհուրդ) ընտրություններն անցկացվեցին 1991թ. դեկտեմբերի 28-ին (պատգամավորների թիվը՝ 81): Առաջին գումարման Ազգային ժողովի առանձնահատկությունն այն է, որ այստեղ պատգամավորական մանդատ ստացան թվով 13 զինվորականներ: Այդուհանդերձ, զինվորականները, չնայած մեծ հեղինակությանը հասարակության մեջ, չփորձեցին իրենց կամքը թելադրել խորհրդարանում, այլ գործում էին իրենց քաղաքական կազմակերպությունների ընդհանուր մոտեցում-

⁴¹ Օհանյան Ա., նույն տեղում:

⁴² Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության հանրաքվեի արդյունքների մասին, <http://nkr.am/hy/referendum/42/>, (12.06.2017)

ների շրջանակում: Առանցքային նշանակություն ունեցան 1995թ. ապրիլի 30-ին անցկացված խորհրդարանական ընտրությունները (կրճատվեց պատգամավորների թիվը՝ 33), քանզի դրանք առաջինն էին հրադադարի մասին համաձայնագրի կնքումից ի վեր: 1996թ. Գերագույն խորհուրդը վերանվանվեց Ազգային ժողովի⁴³: 2000թ. հունիսի 18-ին անցկացվեցին հերթական խորհրդարանական ընտրությունները, որի արդյունքում պատգամավորական մանդատ ստացան թվով 33 պատգամավորներ «Ժողովրդավարական Արցախի միություն» (ԺԱՄ), Հայ Հեղափոխական Դաշնակցություն (ՀՅԴ), «Արցախի Արմենական», «Արցախի սոցիալ-դեմոկրատական» կուսակցություններից, ինչպես նաև 2 անկախ պատգամավորներ: Թվով 4-րդ խորհրդարանական ընտրություններին (2005 թ. հունիսի 19, կուսակցություններ՝ Արցախի ժողովրդավարական, «Ազատ հայրենիք», «ՀՅԴ-Շարժում-88» կուսակցական դաշինք, անկախ պատգամավորներ) հաջորդեցին մի քանի առանցքային իրադարձություններ: Նախ՝ Արցախի Հանրապետության Սահմանադրության ընդունումը 2006թ. դեկտեմբերի 10-ին, ապա նաև Բանակցային գործընթացում ստեղծված նոր իրավիճակն ու «Մադրիդյան սկզբունքներ» կոչվող Բանակցային փաստաթղթի գաղտնագերծումը:

2010թ. մայիսի 23-ի խորհրդարանական ընտրություններն անկացվեցին բարեփոխված «Ընտրական օրենսգրքի» հիման վրա⁴⁴ մեծամասնական և համամասնական ընտրական համակարգերով՝ համապատասխանաբար 16 և 17 տեղերով: Խորհրդարանում ընդգրկվեցին հետևյալ կուսակցությունները՝ «Ազատ հայրենիք», «Արցախի ժողովրդավարական», «Հայ հեղափոխական դաշնակցություն» և «Արցախատուն» պատգամավորական խումբը: Սակայն 5-րդ գումարման Ազգային ժողովում ներկայացված չէին ընդդիմադիր պատգամավորներ: Խորհրդարանական վերջին՝ 6-րդ գումարման Ազգային ժողովի ընտրությունների (2015թ. մայիսի 3) արդյունքում խորհրդարանում ընդգրկվեց նաև ընդդիմադիր «Ազգային վերածնունդ»

⁴³Լեոնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետության Ազգային ժողով, <http://www.nankr.am/hy/32>, (12.06.2017)

⁴⁴ԼՂՀ Ընտրական օրենսգիրք <http://cecokr.am/լղհ-ընտրական-օրենսգիրք/>, (15.06.2017)

կուսակցությունը: «Ազատ հայրենիք» կուսակցությունը վերջին երկու գումարման խորհրդարանում ստացել է առավելագույն թվով պատգամավորական մանդատներ: Եթե համեմատենք ընտրություններին բնակչության մասնակցության թիվն այս ժամանակահատվածում, ինչը շատ կարևոր է հատկապես ընտրական գործընթացների նկատմամբ բնակչության վստահության տեսանկյունից, ապա կարելի է փաստել, որ, 2010թ. համեմատությամբ 2015թ. մասնակցության ցուցանիշը աճել է գրեթե 4%-ով, համապատասխանաբար՝ 67.8% և 70.6%:

Կուսակցությունների գործունեությունն Արցախում կարգավորվում է «Կուսակցությունների մասին ԼՂՀ օրենքով», որը սահմանում է, որ պետական գրանցման պահին կուսակցությունը պարտավոր է ունենալ ոչ պակաս, քան 100 անդամներ և ունենալ տարածքային ստորաբաժանումներ Արցախի Հանրապետության շրջանների առնվազն 1/3-ում, այդ թվում՝ նաև Ստեփանակերտում⁴⁵: Օրենքի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ այն չի խոչընդոտում կուսակցությունների ստեղծմանն ու գործունեության ապահովմանը, սակայն չկան նաև այդ գործընթացը խթանող հստակ մեխանիզմներ: Թեև, ինչպես վերը նշվեց, «Արցախի ժողովրդավարական կուսակցությունն» ակտիվ միջազգային գործունեություն է ծավալում, ինչն աննախադեպ է Հարավային Կովկասի չճանաչված պետությունների համար, սակայն պետք է նկատել, որ Արցախում էլ, ինչպես հետխորհրդային մյուս չճանաչված և ճանաչված պետություններում, դեռևս վաղ է խոսել բազմակուսակցական համակարգի կայացման մասին:

Կուսակցությունների ինստիտուցիոնալացման համար կարևոր է նաև նրանց միջև ոչ միայն մրցակցային, այլև փոխզիջումային հարաբերությունները, որն իր վառ արտահայտությունը պետք է գտնի նախ և առաջ ծրագրերում, որդեգրած ռազմավարության մեջ և այլն: Ընդհանուր առմամբ կուսակցությունների սահմանափակ ներուժն ու զարգացման մեխանիզմների թուլությունը լուրջ խոչընդոտ են նոր որակի քաղաքական մրցակցություն ապահովող բազմակուսակցական համակարգի ձևավորման ճանապարհին: Ավելին, երբեմն

⁴⁵ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքը կուսակցությունների մասին, <http://minjustnkr.am/nkr/Պետական-ռեգիստր.php>, (05.04.2017)

կուսակցական պայքարը չճանաչված պետություններում կարող է դիտարկվել որպես «շքեղություն», որն իրենց թույլ տալ չեն կարող՝ ելնելով ճանաչված չլինելու փաստով: Չճանաչված պետություններում ընդդիմությունն ընկալվում է որպես անկայունության աղբյուր և սպառնալիք անվտանգության համար⁴⁶: Հետպատերազմական շրջանում չճանաչված պետություններին, այդ թվում նաև Արցախին, բնորոշ է զինվորականների ներգրավվումը խորհրդարանում, քանզի նրանք ունեն շատ մեծ հեղինակություն: Այս բոլոր գործընթացները խոչընդոտում են կուսակցությունների ինստիտուցիոնալացման գործընթացին, ինչն իր ուղիղ ազդեցությունն է գործում նաև բազմակուսակցական համակարգի ձևավորման վրա: Արցախում կուսակցությունների ձևավորման ու գործունեության վրա մեծ ազդեցություն են գործել նաև պատմական նախընթաց գործընթացներն ու քաղաքական միջավայրը, հակամարտության կարգավորման գործընթացն ու կարգավիճակի խնդիրը: Եվ բոլորովին էլ պատահական չէ, որ կարգավիճակի որոշման խնդիրը ներառված է գրեթե բոլոր կուսակցությունների ծրագրերում: Առանձնահատուկ հիշատակման է արժանի այն փաստը, որ Արցախում տեղի ունեցած խորհրդարանական և նախագահական ընտրությունները անցել են առանց թերությունների և բողոքների, միջազգային դիտորդների մասնակցությամբ և ընտրական գործընթացների որակը կարող է փաստել Արցախի ժողովրդի մոտեցումների և ժողովրդավարական գործընթացների ու սկզբունքների համադրելիությունը:

Հարավային Օսիայի դեպքը

Հարավային Օսիայում կուսակցությունների և տարբեր շարժումների ձևավորման վրա մեծ ազդեցություն է թողել ինչպես պատմական, այնպես էլ քաղաքական ամբողջ համատեքստը, որն առկա էր տարածաշրջանում: Քաղաքական և տնտեսական անկայունությունը, նոր քաղաքական համակարգի ձևավորման

⁴⁶ Nagorno-Karabakh, Freedom in the World 2012, <https://freedomhouse.org/report/freedom-world/2012/nagorno-karabakh>, (05.04.2017)

խոչընդոտները չէին կարող իրենց ազդեցությունը չթողնել կուսակցությունների գաղափարախոսության և ծրագրերի վրա:

1990թ., մինչ Վրաստանում կանցկացվեին խորհրդարանական ընտրություններ, Վրաստանի Գերագույն խորհուրդը հաստատեց ընտրական օրենսգիրքը, որն արգելում էր ընտրություններին մասնակցել այն կուսակցություններին, որոնք գործունեություն էին իրականացնում միայն առանձին վարչական տարածքներում (այդ թվում նաև Հարավային Օսիայի ինքնավար մարզի տարածքում): Այդ որոշումը Հարավային Օսիայում ընդունվեց որպես արգելք՝ որոշումների կայացման գործընթացում մասնակցելու համար և ակնհայտորեն ցույց տվեց, թե առհասարակ ինչ կարող էր ակնկալել Հարավային Օսիան արդեն իսկ անկախ Վրաստանի⁴⁷: Որից անմիջապես հետո՝ 1990թ. սեպտեմբերի 20-ին, Հարավային Օսիայի Ինքնավար մարզը հռչակեց անկախությունն ու բոլորտեց նույն տարվա հոկտեմբերին Վրաստանում անցկացվող Գերագույն Խորհրդի ընտրությունները: Գերագույն Խորհրդի ընտրությունների արդյունքում առավելագույն ձայներ ստացավ «Կլոբ սեղան-ազատ Վրաստան» դաշինքը, իսկ Զվիադ Գամսախուրդին դարձավ Գերագույն խորհրդի նախագահ⁴⁸:

1990թ. դետեմբերի 9-ին ձևավորվեց Հարավային Օսիայի Հանրապետության առաջին օրենսդիր մարմինը՝ Գերագույն խորհուրդը, որի կազմում ընդգրկվեցին 64 պատգամավորներ: 1992թ. հունվարի 19-ին անցկացված հանրաքվեի⁴⁹ հիման վրա նույն տարվա մայիսին ընդունվեց Հարավային Օսիայի Հանրապետության անկախության հռչակագիրը: Արդեն իսկ 1994թ. անցկացված Գերագույն Խորհրդի երկրորդ ընտրություններում, որում, ի տարբերություն նախորդի, չընդգրկվեցին «Ադամոն նիխաս»-ի ներկայացուցիչներն, իսկ Գերագույն խորհրդի այն ուժերը, որոնց հարազատ էր կոմունիստական գաղափարախոսությունը, համախմբվեցին մեկ

⁴⁷ **Sammut D., Cvetkovski N.**, The Georgia—South Ossetia Conflict, London, 1996, p. 11.

⁴⁸ **Kochieva I., Margiev A.**, GEORGIA: Ethnic Cleansing of Ossetians 1989-1992, Moscow, p. 6.

⁴⁹ История Парламентаризма ПИОО, <http://www.parliamentso.org/node/7>, (10.07.2017)

քաղաքական ուժի շրջանակներում, որն առաջնորդում էր Լյուդվիգ Չիբիրովը: 1990թ. ձևավորված Գերագույն խորհուրդն իր գործունեությունը սկսեց բավական բարդ ժամանակահատվածում, քանզի բոլոր որոշումները կայացվում էին ռազմական գործողությունների պայմաններում և նպատակ էին հետապնդում լուծել ազգային անվանգությանն ու պետության լեգիտիմությանն առնչվող հարցեր: Իրավիճակի կտրուկ փոփոխություն տեղի ունեցավ 1994թ. ընտրություններից հետո, երբ ռազմական գործողություններն արդեն ավարտվել էին, և հակամարտությունը կարգավորման փուլում էր: Օրենսդիր մարմնում սկսեցին ակտիվ քննարկվել Սահմանադրության և դրանից բխող օրենքների մշակման հարցերը:

1996թ. սահմանադրական բարեփոխումների արդյունքում Հարավային Օսիան խորհրդարանական հանրապետությունից անցում կատարեց դեպի նախագահական կառավարման համակարգ, իսկ Գերագույն խորհուրդը վերանվանվեց Խորհրդարանի: Երկրորդ խորհրդարանական ընտրություններից հետո ևս մեծամասնություն էին կազմում «Կոմունիստական կուսակցության» անդամները կամ նրանց հարող անկախ պատգամավորները: Ընտրությունների արդյունքում կոմունիստները ստացան 50%-ից ավելի քվեներ, իսկ երկրորդ քաղաքական ուժը, որը պատգամավորական մանդատներ ստացավ «Ֆիդիբաստե» (Фидыбæстæ) ազգային շարժումն էր:

Հարավային Օսիայի երրորդ գումարման խորհրդարանում պատկերը գրեթե նույնն էր, ակտիվ քննարկվում էր նոր Սահմանադրության հայեցակարգը, որն ընդունվեց 2001թ.⁵⁰: 2004թ. ձևավորված չորրորդ գումարման խորհրդարանում մանդատների համար պայքարում էին հետևյալ կուսակցությունները՝ «Հարավային Օսիայի Կոմունիստական կուսակցություն», «Ֆիդիբաստե» ազգային շարժումը, ինչպես նաև նոր ձևավորված «Ազգային կուսակցություն» ու «Միասնություն» հանրապետական կուսակցությունը, սակայն ընտրություններից անմիջապես առաջ «Ֆիդիբաստե» ազգային շարժումը դուրս մղվեց պայքարից Կենտրոնական ընտրական

⁵⁰ Конституция Республики Южная Осетия, <http://minjust-rso.org/law>, (10.07.2017)

հանձնաժողովի հատուկ որոշմամբ: Չորրորդ գումարման ազգային ժողովում ամենամեծ թվով մանդատներ ստացավ «Միասնություն» հանրապետական կուսակցությունը, որը ձևավորվել էր ընդամենը մեկ տարի առաջ և կարողացել էր բավականին ակտիվ գործունեություն ծավալել: Հենց այդ ժամանակահատվածում տեղի ունեցան 2004թ. բախումներն ու 2008թ. Հնգօրյա պատերազմը⁵¹: Ռուս-վրացական պատերազմից հետո Ռուսաստանը ճանաչեց Հարավային Օսիայի և Աբխազիայի անկախությունը, հաստատվեց բավական ակտիվ համագործակցություն Ռուսաստանի հետ տնտեսական, միջկառավարական, սոցիալական, ֆինանսական և այլ ոլորտներում⁵²:

Հատկանշական է, որ Հնգօրյա պատերազմից հետո Հարավային Օսիայում և Աբխազիայում ընդունվեցին և փոփոխվեցին մի շարք օրենքներ, այդ թվում նաև Հարավային Օսիայի Հանրապետության «Խորհրդարանի պատգամավորների ընտրությունների մասին օրենքը»⁵³, որով, մասնավորապես, սահմանվեց, որ Խորհրդարանի պատգամավորների թիվը 34 է, ընտրություններն անցկացվում են համամասնական ընտրական համակարգով՝ կուսակցությունների՝ մինչև ընտրությունները ներկայացրած ցուցակներով: Նոր օրենքով նվազեցվեց պատգամավորության թեկնածուների տարիքային շեմը մինչև 21-ի:

2009թ. մայիսի 31-ին բարեփոխված ընտրական օրենսգրքի հիման վրա անցկացված խորհրդարանական ընտրություններին ևս մասնակցեցին բոլոր չորս կուսակցությունները, սակայն խորհրդարանում մանդատներ ստացան միայն երեքը՝ «Հարավային Օսիայի Կոմունիստական», «Ազգային» և «Միասնություն» կուսակցությունները:

Մինչև հաջորդ խորհրդարանական ընտրությունները Հարավային Օսիայում ակտիվորեն գործող կուսակցությունների թիվը հասավ 9-ի, սակայն 2014թ. խորհրդարանական ընտրությունների արդյունքում

⁵¹ История Парламентаризма РЮО, <http://www.parliamenttrso.org/node/7> (17.10.2016)

⁵² Andre W., Gerrits M., Bader M., Russian patronage over Abkhazia and South Ossetia: implications for conflict resolution, *East European Politics*, 2016, 32, 3, 297–313.

⁵³ О Выборах Депутатов Парламента Республики Южная Осетия, <http://www.parliamenttrso.org/node/24>, (10.07.2017)

պատգամավորական 34 մանդատներից 20-ը ստացավ «Միավորված Օսիա» կուսակցությունը, «Ազգային միասնությունը»՝ 6, և «Ազգային կուսակցությունը»՝ 4 և «Նիխասը» (Ныхас)՝ 4: 2015թ. փոփոխություններ կատարվեցին «Կուսակցությունների մասին օրենքում»⁵⁴, որն ընդունվել էր դեռևս 2002թ. սեպտեմբերի 4-ին: Առանցքային փոփոխությունները կապված էին կուսակցության ստեղծման պահին անդամների նվազագույն շեմի հետ (սահմանվեց 500 նախկին 100-ի փոխարեն): Ի տարբերություն Արցախի և Աբխազիայի՝ այստեղ սահմանվեց նաև տարածքային ստորաբաժանումներում կուսակցության անդամների նվազագույն շեմը՝ 50:

Հարավային Օսիայում ձևավորվել է մի իրավիճակ, երբ ամբողջական ժողովրդավարական պետություն ստեղծելու կառուցվածքային հիմքերն առկա են, ուստի իրապես կարևոր է կատարել համապարփակ և սուբյեկտիվ իրավիճակային վերլուծություն՝ խուսափելու համար նոր սխալներից, ինչպիսիք ի հայտ եկան 2008թ. հնգօրյա պատերազմից հետո: Առավել ևս, որ բովանդակային առումով այդ կառույցները դեռևս կայացման կարիք ունեն, քանի որ խիստ սահմանափակ են դրա համար անհրաժեշտ գիտելիքները և փորձը, իսկ տևական ժամանակահատված իշխանություն ունեցող քաղաքական ուժերը դրանց ձևավորման համար անհրաժեշտ պայմանների ապահովման քայլերի անհրաժեշտություն չեն տեսնում:

Աբխազիայի դեպքը

Աբխազիայի Հանրապետության Սահմանադրությունն⁵⁵ ընդունվել է 1994թ. նոյեմբերի 26-ին: Օրենսդիր մարմինը Ազգային ժողովն է, որում ընդգրկված են 35 պատգամավորներ, ովքեր ընտրվում են հինգ տարի ժամկետով: Աբխազիայում Ազգային ժողովի ընտրություններ անցկացվել են համապատասխանաբար՝ 1991, 1996, 2002, 2007, 2012, 2017 թվականներին: Հատկանշական է, որ

⁵⁴ О внесении изменений в Закон Республики Южная Осетия «О политических партиях», <http://www.parliamentroso.org/node/418>, (10.07.2017)

⁵⁵ Конституция Республики Абхазия, <http://presidentofabkhazia.org/doc/const/>, (15.07.2017)

անկախությունից ի վեր անցկացված գրեթե բոլոր խորհրդարանական ընտրությունների ժամանակ հաղթանակ են տոնել իշխանամետ կուսակցությունները, իսկ մեկ անգամ՝ ընդդիմադիր ուժերը (2002): Արխազիայում ընտրություններն իրականացվում են միայն մեծամասնական համակարգով (երեսունհինգ ընտրատարածքներ):

Արխազիայի առաջին խորհրդարանը (Գերագույն խորհուրդ, 1991-1996թթ.) շատ հաճախ նաև անվանում են «ոսկե» այն պատճառով, որ այստեղ մանդատներ էին ստացել հասարակության կողմից մեծ թվով հարգված և հեղինակավոր անձինք: Խորհրդարանում մեծամասնություն էին կազմում «Միասնություն» Արխազիայի ազգային ֆորումի ներկայացուցիչները (առաջին հասարակական-քաղաքական շարժումն Արխազիայի տարածքում, որը ձևավորվել էր 1989թ. և դադարեց իր գոյությունը 1991թ. ընտրություններից հետո, քանզի շարժման բոլոր առաջնորդներն ընդգրկվեցին Գերագույն խորհրդի կազմում)⁵⁶:

Անկախության հռչակումից ի վեր առաջին բազմակուսակցական ընտրություններն Արխազիայում անցկացվեցին 1996թ., որի արդյունքում պատգամավորական մանդատներ ստացան արխազներ (19), հայեր (3), ռուսներ (4) վրացիներ (2), հույներ(1) և այլն: Առաջին գումարման Ազգային ժողովի ընտրություններին մասնակցեց բնակչության 81%-ը: Մասնակցության բարձր ցուցանիշը բացատրվում է այն հանգամանքով, որ սկզբնական շրջանում (հետկոնֆլիկտային փուլ) շատ բարձր է բնակչության վստահության մակարդակը ընտրական գործընթացների նկատմամբ, հետևաբար մեծ են նաև ակնկալիքները: Այս անգամ բավականին մեծ ակտիվություն ցուցաբերեցին կոմունիստական կուսակցության անդամները, ուստի և ստացան մեծ թվով պատգամավորական մանդատներ:

2002թ. մարտին անցկացված խորհրդարանական ընտրություններին նախորդեցին մի շարք լուրջ և կարևոր իրադարձություններ. նախ՝ Արխազիայի կենտրոնական ընտրական հանձնաժողովը հրաժարվեց ընդունել «Վերածնունդ» շարժման անդամների դիմումները, ինչին հաջորդեցին բողոքի ակցիաները:

⁵⁶ **Сергеева Л.**, Особенности и ограничения институционализации партийной системы непризнанных (частично признанных) государств постсоветского пространства на примере Абхазии, *Вестник Пермского университета*, 2015, 2, 24-39.

Արդյունքում «Վերածնունդ» շարժման առաջնորդները պարզապես որոշեցին չմասնակցել ընտրություններին՝ համարելով, որ դրանք իրականացվում են «Ընտրությունների մասին օրենքի» խախտումներով: Այսպիսով, Ազգային ժողովում պատգամավորական մանդատներ ստացան Հանրապետական «Ապսի» կուսակցության և վրաց-արխազական պատերազմի վետերանների հասարակական-քաղաքական շարժման՝ «Ամցախարայի» ներկայացուցիչները:

2004թ. մարտին ընդունվեց Աբխազիայի օրենսդիր մարմնի՝ «Ազգային ժողովի պատգամավորների ընտրության մասին օրենք»⁵⁷, որում հստակեցվեցին ընտրություններում որպես թեկնածուներ առաջադրվելու չափանիշներն ու ընտրությունների անցկացման կարգը: Ըստ նոր օրենքի, 2007թ. խորհրդարանական ընտրություններից սկսած միայն կուսակցություններն իրավունք ունենին թեկնածուներ առաջադրել: Դրանով խթանվեց կուսակցությունների ներգրավվածությունը քաղաքական գործընթացներում և հստակեցվեցին դրանց սահմանադրական հիմքերը: 2007թ. ընտրություններից հետո 28 պատգամավորական մանդատ ստացան «Վերածնունդ», «Ամցախարա», «Միասնական Աբխազիա» կուսակցությունները: Ընդդիմադիր ուժերից 7 մանդատ ստացան «Աբխազիայի ազգային համաժողովը», «Աբխազիայի կոմունիստական կուսակցությունը» և «Աբխազիայում ռուսական համայնքների կոնգրեսը»:

Չորրորդ գումարման խորհրդարանական ընտրություններում 35 տեղի համար պայքարում էին 148 թեկնածուներ: Ըստ նախնական ցուցակների 35 թեկնածուներ ունեին հանրապետական քաղաքական ուժերը, համապատասխանաբար 11 թեկնածուներ էին ներկայացրել «Միասնական Աբխազիան» և «Աբխազիայի ազգային միասնության

⁵⁷ Закон О выборах депутатов Народного Собрания – Парламента Республики Абхазия, http://presidentofabkhazia.org/upload/iblock/51c/Конституционный_закон_о_выборах_депутатов_Народного_Собрания_-_Парламента_Республики_Абхазия_2015_03_31_13_14_27_563.pdf (15.07.2017)

համաժողովը», «Կոմունիստական կուսակցությունը»⁷, և «Արխազիայի տնտեսական զարգացման կուսակցությունը»⁶, և այլն:

2017թ. գարնանն անցկացված խորհրդարանական ընտրություններն ընթացան երկու փուլերով, ընդ որում, գործող 33 պատգամավորներից 27-ը կրկին առաջադրեցին իրենց թեկնածությունը: Վեցերորդ գումարման Ազգային ժողովի ընտրություններում աննախադեպ ցածր էր մասնակցության ցուցանիշը, որոշ ընտրատեղամասերում նույնիսկ գրանցվեց 25% մասնակցության ցուցանիշ, ինչը ևս մեկ անգամ ցույց է տալիս Արխազիայի քաղաքացիների վստահության ցածր մակարդակը ընտրական գործընթացների հանդեպ:

Վերջին տասնամյակում գլխավոր քաղաքական ուժերը, որոնք մասնակցում են ընտրություններին հետևյալն են՝ «Միասնական Արխազիա», վրաց-աբխազական պատերազմի վետերանների հասարակական-քաղաքական շարժում՝ «Ամցախարա», «Արխազիայի կոմունիստական կուսակցություն», ինչպես նաև ընդդիմադիր «Ազգային միաբանություն» կուսակցությունը:

«Կուսակցությունների մասին օրենքն» Արխազիայում ընդունվել է 2009թ. փետրվարի 24-ին, որտեղ, մասնավորապես ասվում է. «Արխազիայի Հանրապետությունում ընդունվում են քաղաքական բազմակարծությունն ու բազմակուսակցական համակարգը, իսկ պետությունը երաշխավորում է կուսակցությունների հավասարությունն օրենքի առաջ և երաշխավորում է կուսակցությունների իրավունքներն և օրինական շահերի իրացումը»⁵⁸: Օրենքը հստակեցնում է, որ կուսակցության սահմանումը, դրանց ստեղծման նպատակն ու խնդիրները, գործունեության ոլորտները: Այստեղ հստակ սահմանվում է, որ ստեղծման պահին կուսակցությունը պետք է ունենա տարածքային ստորաբաժանումներ առնվազն հինգ վարչատարածքային միավորներում, իսկ կուսակցությունների անդամների նվազագույն թիվը սահմանված է 1000: Արխազիայի

⁵⁸Закон Республики Абхазия О политических партиях, http://presidentofabkhazia.org/upload/iblock/d9b/Закон_o__политических_партия_x_2015_03_31_13_16_59_485. (11.07.2017)

«Կուսակցությունների մասին օրենքի» ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ, թեև օրենքը հաստակեցնում է Աբխազիայի Հանրապետության տարածքում ստեղծվող կուսակցությունների ստեղծման հետ կապված տեխնիկական հարցերն ու օրենսդրական հիմքերը, սահմանում դրանց գործունեության հիմնական ոլորտներն ու պարտականություններն, այնուամենայնիվ, չկան կուսակցությունների ինստիտուցիոնալացման գործընթացն էականորեն խթանող հստակ մեխանիզմներ:

Եզրակացություն

Չճանաչված պետություններում բազմակուսակցական համակարգերի ձևավորման ու կայացման խնդիրների ուսումնասիրությունը և, մասնավորապես, Հարավային Կովկասի երեք չճանաչված պետություններում բազմակուսակցական համակարգերի ստեղծման առանձնահատկությունների, անցկացված խորհրդարանական ընտրությունների, ինչպես նաև կուսակցությունների առանձնահատկությունների ուսումնասիրությունը, թույլ է տալիս եզրակացնել՝

1. Հարավային Կովկասի չճանաչված պետությունները բազմակուսակցական համակարգերի ստեղծման ճանապարհին բախվեցին խնդիրների, որոնք ընդհանուր էին հետխորհրդային տարածքի ինչպես ճանաչված, այնպես էլ չճանաչված պետությունների համար (քաղաքական համակարգի տրանսֆորմացիա, բազմակուսակցական համակարգի ձևավորում և այլն) և որոնց լուծման վրա մեծ ազդեցություն ունի այդ պետությունների միջազգային ճանաչման գործընթացն ու հետկոնֆլիկտային փուլի մարտահրավերների հաղթահարումը:
2. Բազմակուսակցական համակարգի ձևավորման վրա առավել մեծ բացասական ազդեցություն ունի ոչ միայն նման համակարգերի վերաբերյալ գիտելիքների ու փորձի բացակայությունն, այլև հետկոնֆլիկտային շրջանում մեծ ազդեցություն ձեռք բերած զինվորականների ոչ ֆորմալ մեխանիզմներով ներգրավվածությունը պետության կառավարմանը:

3. Չճանաչված պետություններում ճանաչումը դիտարկվում է որպես գլխավոր վերջնականատակ, այն առանցքային տեղ է գրավում կուսակցությունների նախընտրական ծրագրերում և, երբեմն, ընտրությունների ժամանակ օգտագործվում է քարոզչական նպատակներով: Էապես կարևոր է կուսակցությունների ստեղծումն իրենց բնորոշ արժեքային հիմքով և կայունությամբ, սակայն մեկ կուսակցության ինստիտուցիանալացումը չի կարող ապահովել ողջ համակարգի ու բազմակուսակցական համակարգի կայացումը:
4. Առանցքային նշանակություն ունեն կուսակցությունների փոխհարաբերությունները հասարակության մեջ, որոնք պետք է հիմնված լինեն մրցակցության և փոխզիջումային սկզբունքի վրա, ինչն էլ ենթադրում է, որ յուրաքանչյուր կուսակցություն պետք է լինի կայուն ու գործի ըստ իր ռազմավարության, որպեսզի պատրաստ լինի համակագործակցության և մրցակցության: Չճանաչված պետություններում առաջին և հիմնական մարտահրավերը կուսակցությունների մրցակցային համակարգ ստեղծելն է, քանզի չճանաչված պետություններում կուսակցությունների միջև մրցակցությունը որոշ դեպքերում դիտարկվում է որպես անկայունության աղբյուր:
5. Չճանաչված պետություններում «Կուսակցությունների մասին օրենքի» ուսումնասիրությունը թույլ է տալիս ասել, որ, թեև դրանք չեն խոչընդոտում կուսակցությունների ստեղծմանն ու գործունեությանը, սակայն չկան նաև այդ գործընթացը խթանող հստակ մեխանիզմներ, իսկ ընտրություններին բնակչության մասնակցության թվի կրճատումը փաստում է ընտրական գործընթացների նկատմամբ բնակչության վստահության ցածր մակարդակը: Դրական միտում նկատելի է միայն Արցախի Հանրապետությունում:
6. Հետևողական կայուն շրջանում անցկացված ընտրությունները մեծ նշանակություն ունեն հակամարտության կարգավորման գործընթացի հետ անմիջական և ուղիղ կապի պատճառով, ինչպես նաև չճանաչված պետության հասարակական կյանքի կարգավորման ու կազմակերպման սկզբունքի ընտրության

- հարցում: Ընտրությունների արդյունքները մատնանշում են, թե որքանով է ձևավորված իշխանությունը պատրաստ դիմակայել հետկոնֆլիկտային փուլի խնդիրների հաղթահարմանը:
7. Թեև միջազգային կազմակերպությունները չեն ճանաչում ընտրությունների արդյունքները չճանաչված պետություններում, սակայն իրականում դա առնչություն չունի պետության միջազգային ճանաչման գործընթացի հետ: Այդ կազմակերպությունների այս կամ այն արձագանքը մեծապես պայմանավորված է հենց հակամարտության կարգավորման գործընթացում ներգրավված լինելու կամ տարածաշրջանում աշխարհաքաղաքական շահեր ունենալու հանգամանքով: Ընտրությունների արդյունքները չճանաչելը՝ դրանք կապելով պետության ճանաչված չլինելու հետ, ոչ միայն անհիմն է միջազգային իրավունքի շրջանակներում, այլև խոչընդոտում է հակամարտության կարգավորման գործընթացին:

Problems of the formation and consolidation of multiparty systems in non-recognised states of the South Caucasus

MARGARIT PETROSYAN

Brusov State University of Languages and Social Sciences

The article studies the problems of multi-party system formation and consolidation in non-recognized states, on the cases of Nagorno-Karabakh, South Ossetia and Abkhazia. The creation of multiparty system is complicated throughout the whole post-Soviet space. It is of notional importance in terms of state consolidation and formation of political system. In non-recognized states, the problems caused by post-Soviet transformation are further complicated by additional challenges firstly due to the fact of non-recognition, then complex and long-term process of conflict resolution, the impact of geopolitical factor, the lack of economic and political stability, etc. In non-recognized states, party systems are typically characterized by low level of competitiveness. Meanwhile, the processes of establishment and institutionalization of multiparty system contribute to the solution of post-conflict issues, transplantation of democratic traditions and, in general, state consolidation.